

«ԱՆԵՍԹԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՌԵԱՆԻՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ «Անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի» ամբիոն)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ անեսթեզիոլոգներ և ռեանիմատոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ.

դասավանդողներ Սարգիս Ղազարյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ, Գրիգոր Մանուչարյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ, Հովհաննես Սարգսյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ, Արշավիր Թորոսյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ, Կարեն Տոնոյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ, Հայկ Հովհաննիսյանին՝ ՇՄՁ 70 տեսական և 90 գործնական կրեդիտ

- Կոնտակտ 010235310

Շաբաթ 1		
Օր 1		
2 ժամ	Դասախոսություն Ժամանակակից անեսթեզիոլոգիական ձեռնարկի ակտուալ հարցեր	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Աշխատանք բաժանմունքում՝ համատեղ համայց, բաժանմունքում առկա պացիենտների ներկայացում, քննարկում: Ախտորոշիչ, բուժական ու վիրահատական միջամտությունների մասնակցություն	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 2		
2 ժամ	Դասախոսություն Ռեգիոնար անեսթեզիայի արդի հարցեր: Կլինիկական զննում: Հատուկ կլինիկական թեստեր	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Նախապես բաժանվում են խմբերի (2-4 հոգանոց): Յուրաքանչյուր խումբը պատրաստում է մեկ	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան

	կլինիկական դեպքի ներկայացում՝ հիմնված իրական պացիենտի տվյալների վրա կամ սիմուլյացիոն սցենարի: Ներկայացումը պետք է ներառի. • Պացիենտի հիմնական տվյալներ (տարիք, սեռ, բողոքներ) • Ախտորոշումը, ցուցումները ռեգիոնար անեսթեզիայի համար • Ընտրված անեսթեզիայի ձևը (օրինակ՝ սքալենային, ֆեմորալ կամ հումերալ բլոկադա) • Օգտագործված տեխնիկան (անատոմիկ կողմնորոշում, ուլտրաձայն, նյարդ ստիմուլյացիա) • Անզգայացման արդյունքը և հետագա ընթացքը Ստիմուլյացիոն կենտրոնում իրականացվում է ռեգիոնար բլոկադայի նախապատրաստում, տեխնիկայի դիտարկում և մասնակցություն (ըստ ընթացիկ միջամտության): Մասնակցություն միջամտություններին • Դիտում կամ օգնում են ռեգիոնար անեսթեզիայի իրականացման ժամանակ, ներառյալ. ◦ Ներդրման տեղամասի պատրաստում ◦ Ասեպտիկ տեխնիկայի պահպանում ◦ Ուլտրաձայնային տեղորոշում (դիտարկում կամ մասնակցություն) ◦ Դեղամիջոցի ներարկման գործընթացի հետևում	
Օր 3		
2 ժամ	Դասախոսություն Ընդհանուր անեսթեզիայի արդի հարցեր	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները բաժանվում են փոքր խմբերի (2-4 հոգի), յուրաքանչյուր խումբ նախապատրաստում է մեկ կլինիկական դեպք՝ հիմնված բաժանմունքում առկա կամ սիմուլյացիոն պացիենտի տվյալների վրա, որը ներառում է՝ • Պացիենտի պատմություն (անամնեզ) • Վիճակի գնահատում (սրտանոթային, շնչառական, նյարդաբանական, նյութափոխանակային) • ASA դասակարգում, ռիսկերի գնահատում • Ընտրված անեսթեզիայի տիպը և պատճառաբանությունը • Ինդուկցիայի, ինտուբացիայի, պահպանման և արթնացման փուլերի նկարագրություն • Հսկողության (մոնիտորինգի) եղանակներ • Բարդությունների և դրանց կառավարման ռազմավարություններ Վիրահատական սրահում ◦ Մասնակցել նախամիջամտային պացիենտի նախապատրաստմանը (դեղորայքի մատակարարում, մոնիտորինգի միացում)	

	○ Դիտարկել ինդուկցիայի փուլը, շնչուղիների ապահովումը (բաց կամ լարինգեալ դիմակ, ինտուբացիա) ○ Ըմբռնել ցավազրկման և մկանային ռելաքսացիայի դեղամիջոցների ճիշտ ընտրությունը ○ Ուշադրություն դարձնել անեսթեզիայի պահպանման փուլում ցուցանիշների փոփոխություններին և դրանց կառավարմանը ○ Հետևել արթնացման գործընթացին և անեսթեզիոն արժեքների նորմալացմանը Վիրահատական միջամտությունից հետո կազմակերպվում է խմբային քննարկում, որտեղ ուսանողները՝ • Վերլուծում են պացիենտի ընթացքը • Ներկայացնում են իրենց դիտարկումները • Ստանում են դասախոսի մասնագիտական մեկնաբանությունները՝ ուժեղ և բարելավման ենթակա կողմերի վերաբերյալ	
Օր 4		
2 ժամ	Դասախոսություն Մոնիթորինգ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են պացիենտների կլինիկական դեպքեր՝ ուշադրություն դարձնելով անեսթեզիայի ընթացքում կիրառված մոնիթորինգի տեսակներին, դրանց ընտրության պատճառաբանությանը և արձագանքին ցուցանիշների փոփոխություններին: Վերապատրաստվողները ներգրավվում են վիրահատությունների կամ միջամտությունների ժամանակ՝ • Մոնիթորինգի սարքավորման միացում • Ցուցանիշների վերլուծություն (SpO₂, NIBP, ECG, EtCO₂) • Փոփոխությունների արձանագրում և գնահատում անեսթեզիայի ընթացքում	
Օր 5		
2 ժամ	Դասախոսություն Ժամանակակից անեսթեզիայի սարքավորումներ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են դեպքեր, որտեղ կիրառվել են ժամանակակից անեսթեզիայի սարքավորումներ: Քննարկվում են սարքերի ընտրության նպատակահարմարությունը, գործառույթները և դրանց ազդեցությունը անեսթեզիայի ընթացքի վրա:	

	2. Համատեղ համայց բաժանմունքում - Վերապատրաստվողները մասնակցում են պացիենտների զննմանն ու նախապատրաստմանը - Ներկայացվում են անեսթեզիայի սարքավորումները (անեսթեզիայի ապարատ, վենտիլյատոր, ինֆուզիոն, մոնիտորինգի համակարգեր) - Սարքավորումների ստուգում, միացում և հիմնական պարամետրերի բացատրություն 3. Մասնակցություն միջամտություններին - Սարքավորումների կիրառման դիտարկում իրական միջամտությունների ժամանակ - Վերապատրաստվողները հետևում են սարքերի աշխատանքի ընթացքին, արձանագրում փոփոխությունները - Քննարկում են սարքավորումների արձագանքը պացիենտի վիճակի փոփոխություններին 4. Ամփոփում Վերապատրաստվողները ձևակերպում են ձեռք բերած հմտությունները, ընդգծում սարքավորումների դերը պացիենտի անվտանգության ապահովման մեջ:	
Շաբաթ 2		
Օր 1		
2 ժամ	Դասախոսություն Ընդհանուր անեսթեզիայի բարդություններ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են դեպքեր, որտեղ առաջացել են ընդհանուր անեսթեզիայի բարդություններ (հեմոդինամիկ անկայունություն, ալերգիկ ռեակցիաներ, հիպովենտիլյացիա, հետանեսթեզիոն խանգարումներ և այլն): Քննարկվում են բարդությունների պատճառները, ընթացքը և լուծման մոտեցումները: 2. Համատեղ համայց բաժանմունքում - Վերապատրաստվողները մասնակցում են պացիենտների զննմանը, կատարում նախապիրահատական գնահատում՝ հիմնվելով ASA դասակարգման վրա: - Քննարկում են ռիսկերի ու բարդությունների կանխարգելման մոտեցումները : 3. Մասնակցություն միջամտություններին - Մասնակցություն վիրահատական միջամտություններին, երբ բարդություններն արդեն առաջացել են և դրանց լուծմանը/ ստիմուլյացիոն կենտրոնում/: - Վերապատրաստվողները հետևում են և ներգրավվում են բարդությունների կառավարման գործընթացում՝ վերականգնման և հետանեսթեզիոն խնամքի ժամանակ: 4. Ամփոփում Վերապատրաստվողները վերլուծում են կատարված	

	միջամտությունները, ներկայացնում դասախոսության ընթացքում ստացված գիտելիքների կիրառման արդյունքները	
Օր 2		
2 ժամ	Դասախոսություն Դժվար ինտուիցիաներ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են դեպքեր, որտեղ առաջացել են դժվար ինտուիցիաներ: Քննարկվում են ինտուիցիայի գնահատման մեթոդները (Mallampati, Cormack-Lehane) և դրանց ազդեցությունը պացիենտի վիճակի վրա: - Վերապատրաստվողները մասնակցում են պացիենտների գնմանը՝ գնահատելով շնչուղու անատոմիան և հնարավոր դժվարությունները: - Ընտրում են համապատասխան մոտեցումներ և տեխնիկաներ՝ հիմք ընդունելով պացիենտի ֆիզիոլոգիական վիճակը: - Մասնակցություն դժվար ինտուիցիաների իրականացման գործընթացին՝ առկա սարքավորումների օգտագործմամբ (լարինգոսկոպ, Յուժենկոյի լարինգոսկոպ, ինտուիցիայի խողովակներ և այլն) / ստիմուլյացիոն կենտրոնում/: - Վերապատրաստվողները հետևում և մասնակցում են պրոցեդուրայի ընթացքին, արձանագրում են ամենատարբեր մեթոդների կիրառման արդյունքները/ ստիմուլյացիոն կենտրոնում/:	
Օր 3		
2 ժամ	Դասախոսություն Սխալներ և վտանգներ անեսթեզիոլոգիայում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են դեպքեր, որտեղ տեղի են ունեցել անեսթեզիայի սխալներ կամ վտանգներ (օրինակ՝ դեղամիջոցների սխալ դոզավորում, մոնիտորինգի անճշտություններ, վերականգնման խնդիրներ): Քննարկվում են դրանց պատճառները, հետադարձ կապը և սխալներից խուսափելու մեթոդները: Մասնակցություն միջամտություններին - Մասնակցություն միջամտությունների ընթացքին՝ քննարկելով բարդությունների կանխարգելման միջոցառումները:	

	Վերապատրաստվողները հետևում են մոնիտորինգի, դեղամիջոցների ճիշտ կիրառմանը, և սխալների վաղ հայտնաբերման ռազմավարություններին: Ստիմուլյացիոն կենտրոնում մանիկենների վրա ստեղծվում են տարբեր իրավիճակներ, որտեղ մասնակիցները օգտագործում են իրենց ստացած գիտելիքները, լուծումներ գտնելու համար	
Օր 4		
2 ժամ	Դասախոսություն Ռեգիոնար անեսթեզիայի բարդություններ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: . Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են դեպքեր, որտեղ առաջացել են ռեգիոնար անեսթեզիայի բարդություններ (որպես օրինակ՝ նյարդի վնաս, դեղորայքային ռեակցիաներ, կամ պացիենտի փսիխոլոգիական ռեակցիաներ): Քննարկվում են դրանց պատճառները, ախտանշանները և բուժման մոտեցումները: 2. Համատեղ համայնք բաժանմունքում - Վերապատրաստվողները մասնակցում են պացիենտների զննմանը՝ գնահատելով ռեգիոնար անեսթեզիայի հնարավոր ռիսկերը: - Քննարկվում է համապատասխան նախապատրաստման գործընթացը՝ ռեգիոնար անեսթեզիայի ընտրության համար: 3. Մասնակցություն միջամտություններին - Վերապատրաստվողները մասնակցում են ռեգիոնար անեսթեզիայի գործընթացներին՝ հետևելով և մասնակցելով այդ գործընթացի ամբողջական իրականացմանը - Ուսումնասիրում են ռեգիոնար անեսթեզիայի բացասական հետևանքները, որոշում բուժման վաղ օրինակներ: Ստիմուլյացիոն կենտրոնում մանիկենների վրա ստեղծվում են տարբեր իրավիճակներ/ բարդություններ, որտեղ մասնակիցները օգտագործում են իրենց ստացած գիտելիքները, լուծումներ գտնելու համար	
Օր 5		
2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ (ԱԶ) գերիատրիայում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: 1. Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են գերիատրիայում իրականացված անեսթեզիոլոգիական միջամտությունների դեպքեր՝ հաշվի առնելով տարեց պացիենտների հատուկ	

	պահանջները: Քննարկվում են ռիսկերը, դեղորայքային խմբերը և անեսթեզիայի ընտրություն՝ կապված տարիքային փոփոխությունների և համակցված հիվանդությունների հետ: • Վերապատրաստվողները մասնակցում են տարեց պացիենտների հետազոտմանը՝ գնահատելով ASA դասակարգումը, պացիենտի ֆիզիոլոգիական վիճակը: • Կատարվում է անեսթեզիայի նախապատրաստություն՝ հաշվի առնելով համապատասխան մեթոդների ընտրությունը և ռիսկերի նվազեցումը: • Մասնակցություն վիրահատական միջամտություններին՝ անհատականացված անեսթեզիայի պլանավորման արդյունքում: • Վերապատրաստվողները հետևում են անեսթեզիայի ընթացքին՝ գնահատելով տարեց պացիենտի մարմնի արձագանքները և բուժման տարբերակները:	
Շաբաթ 3		
Օր 1		
2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ կրծքային վիրաբուժությունում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: 1. Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են կրծքային վիրաբուժության ընթացքում կատարված անեսթեզիոլոգիական միջամտությունների դեպքեր՝ հաշվի առնելով վիրաբուժության բարդությունները (օրինակ՝ բաց կրծքային վիրահատություններ, մուլտիդիսցիպլինար մոտեցումներ): Քննարկվում են վիրահատական միջամտության նախապատրաստությունը, ընտրված անեսթեզիայի եղանակը և արդյունքները: • Վերապատրաստվողները մասնակցում են կրծքային վիրաբուժություն նախատեսող պացիենտների նախազննմանը՝ գնահատելով ASA դասակարգումը և որոշելով լավագույն անեսթեզիա՝ հաշվի առնելով պացիենտի առողջական վիճակը: • Կատարվում է համապատասխան մոնիտորինգի ընտրություն՝ հենվելով վիրահատության բնույթին: • Մասնակցություն կրծքային վիրաբուժական միջամտություններին՝ գնահատելով անեսթեզիայի ընթացքը՝ կապված արյան շրջանառության, շնչառության և այլ ֆիզիոլոգիական ցուցանիշների հետ: • Վերապատրաստվողները ներգրավվում են վիրահատական գործընթացին, գնահատում են մոնիտորինգի արդյունքները, արձանագրում են փոփոխությունները:	

	Սովորում և կատարում են ընտրողական ինտուիցիա, օգտագործելով երկյուսանքանի ինտուիցիոն փողրակ:	
Օր 2		
2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ ներյովիրաբուժությունում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: 1. Կլինիկական դեպքերի ներկայացում Վերապատրաստվողները ներկայացնում են ներյովիրաբուժության ժամանակ կատարված անեսթեզիոլոգիական միջամտությունների դեպքեր՝ հաշվի առնելով ներյովիրաբուժության բարդություններն ու հատուկ պահանջները: Քննարկվում են ընտրված անեսթեզիայի մեթոդները, ինչպես նաև ներյովիրաբուժության ազդեցությունը անեսթեզիայի մենեջմենտի վրա: - Վերապատրաստվողները մասնակցում են ներյովիրաբուժական պացիենտների գննմանը՝ գնահատելով նրանց նյարդաբանական վիճակը և ASA դասակարգումը: - Կատարվում է համապատասխան անեսթեզիայի պլանավորում՝ հիմնված պացիենտի հիվանդության և վիրահատության տեսակի վրա: - Վերապատրաստվողները մասնակցում են ներյովիրաբուժական վիրահատություններին՝ հետևելով մոնիտորինգի ցուցանիշներին, որոնք ներառում են գլխուղեղի շրջանառության և սթրեսի մակարդակների մոնիթորինգ: - Արձանագրվում են անեսթեզիայի ընթացքի մեջ հնարավոր փոփոխությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ներյովիրաբուժության ընթացքում առաջացող ռիսկերին	
Օր 3		
2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ տրավմատոլոգիայում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են տրավմատոլոգիայի ժամանակ կատարված անեսթեզիոլոգիական միջամտությունների դեպքեր՝ հաշվի առնելով տրավմայի բնույթը (օրինակ՝ բազմակի վնասվածքներ, ծանր հեմոդինամիկ անկայունություն): Քննարկվում են այդ պայմաններում իրականացված անեսթեզիայի միջոցառումները, ներառյալ ռիսկերի գնահատումը և մոնիտորինգի ռազմավարությունները:	

	- Վերապատրաստվողները մասնակցում են տրավմատոլոգիական պացիենտների գնմանը՝ գնահատելով ASA դասակարգումը, պացիենտի վիճակը և նախապատրաստման անհրաժեշտությունը: - Քննարկվում են համապատասխան անեսթեզիայի պլանավորումը/ տեսակի ընտրությունը՝ ներառյալ տարբեր վիրահատական միջամտությունների ռիսկերը: - Մասնակցում են ընտրված անեսթեզիոլոգիայի եղանակի իրականացմանը: - Մասնակցություն տրավմատոլոգիական վիրահատություններին՝ հիմնված պացիենտի վիճակի գնահատման վրա: - Վերապատրաստվողները վերահսկում են մոնիթորինգի ցուցանիշները՝ ուշադրություն դարձնելով շնչառության, արյան շրջանառության և ցավի կառավարման վրա:	
Օր 4		
2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ LOR և դիմաձնոտային վիրահատությունների ժամանակ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են LOR և դիմաձնոտային վիրահատությունների օրինակներ՝ անդրադառնալով անեսթեզիայի ընտրությանը, կոմպլիկացիաների կառավարմանը և հատուկ միջամտություններին: Դատվում են վերապատրաստվողի կողմից կիրառվող մոտեցումները, իսկ պացիենտի վիճակի գնահատումը համարվում է կարևոր: - Վերապատրաստվողները դիտարկում են պացիենտների նախնական վիճակը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով շնչառության համակարգին և արյան շրջանառությանը: - Նշվում են անհատական պլանավորման կարևորությունը և վիրահատության նախապատրաստման պրոցեսները - Տեղում իրականացվում է անեսթեզիայի կառավարումը՝ նպատակ ունենալով աջակցել վիրահատության անվտանգությանը և պրոցեսի ճկունությանը: - Հետևում են մոնիթորինգի ցուցանիշներին՝ շնչառական համակարգ, օքսիգենացիա և այլ կարևոր գործոններ: - Վերապատրաստվողները ամփոփում են այն հիմնական մեթոդները, որոնք կիրառվել են LOR և դիմաձնոտային վիրահատություններում, նշում են հաջողություններն ու առաջացած բարդությունները	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնդյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 5		
2 ժամ	Դասախոսություն	Սարգիս Ղազարյան/

	Անեսթեզիոլոգիական ձեռնարկ կոլո-պրոկտոլոգիայում	Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են կոլո-պրոկտոլոգիայի ոլորտում իրականացված անեսթեզիոլոգիական միջամտությունների դեպքեր՝ հաշվի առնելով տարբեր վիրահատությունների առանձնահատկությունները: Քննարկվում են հիվանդների նախապատրաստման և միջամտության ընթացքում կիրառվող տարբեր անեսթեզիայի մեթոդները: • Վերապատրաստվողները զննում են կոլո-պրոկտոլոգիական վիրահատություններ անցնող պացիենտներին՝ գնահատելով նրանց ընդհանուր վիճակը, ASA դասակարգումը և հատուկ ռիսկերը: • Արժևորվում է վիրահատության նախապատրաստական փուլը՝ ներառյալ պացիենտի վիճակի գնահատումը: • Վերապատրաստվողները ներգրավվում են կոլո-պրոկտոլոգիական վիրահատություններին՝ մասնակցելով և վերահսկելով անեսթեզիայի ընթացքը, ուշադրություն դարձնելով վիրահատության համար համապատասխան մոնիտորինգին: • Վիրահատական միջամտություններում իրականացվում են մշտական պացիենտի վիճակի հետևում և անհրաժեշտ միջամտություններ:	

Շաբաթ 4

Օր 1

2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիան անհետաձգելի վիրահատությունների ժամանակ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները վերլուծում են անհետաձգելի վիրահատությունների ընթացքում իրականացված անեսթեզիոլոգիական մոտեցումները՝ շեշտը դնելով արագ արձագանքման, շոկային վիճակների կառավարելու և ինդուկցիայի ժամանակի օպտիմալացման և դեղերի ճիշտ ընտրության վրա: Վերապատրաստվողները գնահատում են կենսական ֆունկցիաները և ընտրում համապատասխան անեսթեզիայի ռազմավարություն՝ տվյալ իրավիճակի հիման վրա: • Ներգրավում անհետաձգելի վիրահատություններին, մասնավորապես՝ պացիենտի կայունացման, մոնիտորինգի անհապաղ կազմակերպման և ինդուկցիայի արագ անցկացման փուլերում: • Վերապատրաստվողները իրական ժամանակում արձագանքում են հեմատոդինամիկ փոփոխություններին:	

Օր 2

2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ ամբուլատոր պրակտիկայում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են ամբուլատոր միջամտությունների ընթացքում կիրառված անեսթեզիայի տարբերակները՝ ներառյալ տեղային, սեդացիոն և կարճատև ընդհանուր անեսթեզիա: - Կատարվում է պացիենտների նախավիրահատական արագ գնահատում՝ ամբուլատոր միջամտության պայմաններում համապատասխանության որոշմամբ: - Ուսումնասիրվում են վաղ դուրսգրման պայմանները և վերականգնման ժամանակահատվածի կառավարման մոտեցումները: - Վերապատրաստվողները մասնակցում են ամբուլատոր միջամտությունների ընթացքում անեսթեզիայի ապահովմանը, հսկում պացիենտի վիճակը և արձագանքում արագ փոփոխություններին: - Ընտրվում են անվտանգ և քիչ բարդություններով ընթացող անեսթեզիայի սխեմաներ	

Օր 3

2 ժամ	Դասախոսություն Անեսթեզիոլոգիական ձեռնարկ դիագնոստիկ հետազոտությունների ժամանակ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են անեսթեզիայի կիրառման դեպքեր ոչ ինվազիվ և ինվազիվ դիագնոստիկ միջամտությունների ժամանակ՝ օրինակ՝ ՄՌՏ, էնդոսկոպիա, կաթետերիզացիա: - Վերապատրաստվողները ուսումնասիրում են այն պացիենտներին, ովքեր պատրաստվում են դիագնոստիկ հետազոտության՝ գնահատելով անեսթեզիայի ցուցումները, հակացուցումները և հնարավոր ռիսկերը: - Շեշտը դրվում է սեդացիայի մակարդակի ճշգրտման վրա՝ ըստ միջամտության տևողության և բնույթի: - Վերապատրաստվողները ներգրավվում են ընթացիկ հետազոտությունների ժամանակ՝ մասնակցելով մոնիտորինգի կազմակերպմանը, օդուղու վերահսկմանը և վիճակի գնահատմանը: - Հատուկ ուշադրություն է դարձվում կարճ վերականգնման փուլին և պացիենտի արագ արտահոսքին:	

Օր 4

2 ժամ	Դասախոսություն	Սարգիս Ղազարյան/
-------	-----------------------	------------------

	Անեսթեզիոլոգների տակտիկական կրիտիկական վիճակներում	Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները ներկայացնում են իրական կլինիկական դեպքեր՝ կապված սուր շնչառական անբավարարության, հեմոդինամիկ շոկի, պոլիտրավմայի կամ սրտային կանգի իրավիճակների հետ: - Վերապատրաստվողները գնահատում են բաժանմունքում գտնվող պացիենտների վիճակը՝ կիրառելով առաջնային և երկրորդային զննման ալգորիթմներ : - Կատարում են կայունացման քայլեր, թթվածնային թերապիայի, ինֆուզիոն վերականգնման և հրատապ դեղորայքային միջամտությունների պլանավորմանը: - Իրական ժամանակում ներգրավում են ինտենսիվ թերապիայի միջոցառումների, վերակենդանացման և արհեստական շնչառության կազմման ու վերահսկման, արագ որոշումներ պահանջող անեսթեզիոլոգիական գործընթացներին:	

Օր 5

2 ժամ	Դասախոսություն Էթիկայի և դեոնտոլոգիայի հարցեր անեսթեզիոլոգիայում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առնչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում: Վերապատրաստվողները քննարկում են իրական դեպքեր, որոնցում առաջացել են բժշկական էթիկայի կամ հաղորդակցության խնդիրներ՝ կապված համաձայնության, տեղեկատվության տրամադրման կամ պացիենտի իրավունքների հետ: - Վերապատրաստվողները դիտարկում են բժիշկ-պացիենտ հարաբերություններն իրական պայմաններում: - Ուսումնասիրվում են թիմային աշխատանքի, մասնագիտական պահվածքի և վստահության պահպանման տարրերը: Կազմակերպվում են իրավիճակային քննարկումներ՝ մոդելավորելով կոնֆլիկտային կամ սահմանային էթիկական դրվագներ՝ փորձելով գտնել ճիշտ մասնագիտական լուծումներ:	

Շաբաթ 5

Օր 1

3 ժամ	Դասախոսություն Սիրտ-թոքային վերակենդանացման հիմնական եղանակները	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/
-------	--	---

3 ժամ	Գործնական աշխատանք Թեմային առանցքով կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Դեպքերի ներկայացում (15–20 րոպե) 2–3 կլինիկական դեպք՝ տարբեր իրավիճակներով (շոկային/անշոկ ռիթմ, հոսպիտալային/արտահիվանդանոցային ՍԹ-Վ և այլն) - Ներառված են անամնեզ, ռիթմ, կենսացուցանիշներ, միջամտությունների արձագանք: Խմբային վերլուծություն (30 րոպե) - Վերապատրաստվողները փոքր խմբերով մշակում են գործողությունների պլան՝ ըստ BLS/ACLS ուղեցույցների: - Կիրառում են ալգորիթմները՝ դեպքի հիման վրա: Ներկայացում և քննարկում (30 րոպե) - Խմբերը ներկայացնում են իրենց որոշումները: - Դասավանդողի կողմից՝ վերլուծություն, շտկումներ, բանավոր ուղղորդում: Հմտությունների սիմուլյացիա - Կրծքավանդակի սեղմումներ - Դեֆիբրիլյացիա - Արհեստական շնչառություն - Դեղամիջոցների կիրառում Գործնական աշխատանքը կատարվում է ստիմուլյացիոն կենտրոնում, մանեկենների վրա:	Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 2		
3 ժամ	Դասախոսություն Արհեստական և օժանդակ շնչառության ցուցումներ, տարբեր ռեժիմներ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանցքով կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ - Դեպքերի ներկայացում (ARDS, COPD, հիպոկսեմիկ շոկ, թունավորում և այլն) - Խմբային վերլուծություն՝ - Շնչառության խանգարման գնահատում - Ճիշտ ռեժիմի ընտրություն՝ ըստ պացիենտի վիճակի - Վենտիլյացիայի կարգավորումների առաջարկ Ներկայացում և քննարկում դասավանդողի հետ (Ըստ հնարավորության) սիմուլյացիոն վարժանք՝ - Վենտիլյատորի կարգավորումներ մանեկենի վրա - Մոնիտորինգի ցուցանիշների գնահատում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան

	Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում) Նպատակ՝ Իրական հիվանդների վրա տեսական և գործնական գիտելիքների ամրապնդում Գործունեություն՝ - Համատեղ համայնց՝ վերապատրաստվողների մասնակցությամբ - Բաժանմունքում գտնվող շնչառական աջակցություն ստացող պացիենտների ներկայացում և վիճակի վերլուծություն - Վենտիլյացիոն ռեժիմների քննարկում - Գազային անալիզների, շնչառական պարամետրերի գնահատում - Ախտորոշիչ (օր.՝ շնչուղիների բրոնխոսկոպիա), բուժական կամ ինտուբացիոն միջամտությունների դիտարկում կամ մասնակցություն՝ դասավանդողի հսկողությամբ	
Օր 3		
3 ժամ	Դասախոսություն Արհեստական շնչառության անջատման չափանիշները և մեթոդները	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Վերնագիր՝ Թեմային առանշվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Դեպքերի ընտրություն՝ ARDS-ից վերականգնվող պացիենտ Նյարդաբանական խանգարումով, բայց կայուն վիճակում պացիենտ Պատահական էքստուբացիայի դեպք Վերլուծություն խմբերով՝ Արդյոք պացիենտը պատրաստ է weaning-ին Ինչ մեթոդով իրականացնել SBT Որոնք են էքստուբացիայից հետո հնարավոր ռիսկերն ու կանխարգելումը Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում) Նպատակ՝ Իրական հիվանդների վրա անջատման գործընթացի գնահատում և մասնակցություն Գործունեություն՝ Համատեղ համայնց Բաժանմունքում շնչառական աջակցությամբ պացիենտների ներկայացում Կենսական ցուցանիշների և շնչառական պարամետրերի վերլուծություն Պացիենտների weaning պլանի քննարկում Մասնակցություն SBT-ի իրականացմանը և էքստուբացիային՝ ըստ հնարավորության	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 4		

3 ժամ	Դասախոսություն Ինտենսիվ թերապիայի առանձնահատկությունները բազմակի վնասվածքների դեպքում	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ Դեպքերի ընտրություն՝ - Բազմակի վնասվածքով հիվանդ՝ արյունահոսությամբ - Կրծքավանդակի վնասում՝ շնչառական անբավարարությամբ - Ոսկրային և որովայնային տրավմա՝ շոկի նշաններով Վերլուծություն խմբերով՝ - Նախնական գնահատում (ABCDE) - Շոկի պատճառի պարզում և մատակարարման մարտավարություն - Հեմոդինամիկ աջակցության և արյան փոխներարկման պլանավորում Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում) Նպատակ՝ Իրական հիվանդների վրա բազմակի վնասվածքների ինտենսիվ բուժման փուլերի ընկալում և մասնակցություն Գործունեություն՝ - Համատեղ համայց - Բաժանմունքում բազմակի վնասվածքով պացիենտների ներկայացում և վերլուծություն - Վնասների բնույթի, վիճակի ծանրության և բուժման փուլերի քննարկում - Արյան փոխներարկման, ինֆուզիոն, շնչառական և դեղորայքային աջակցության պլանավորում - Մասնակցություն ախտորոշիչ, բուժական և վիրահատական միջամտություններին՝ ըստ դեպքի Գործնական աշխատանքը կատարվում է ստիմուլյացիոն կենտրոնում, մանեկենների վրա, տարբեր իրավիճակներում:	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 5		
3 ժամ	Դասախոսություն Գանգուղեղային վնասվածքների ինտենսիվ թերապիան, գլխուղեղի այտուց, ախտորոշումը, բուժումը	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ Դեպքեր՝ - Ծանր գանգուղեղային վնասվածք՝ GCS $\leq$ 8 - Գլխուղեղի այտուց՝ բարդացած ընկալման խանգարմամբ կամ ցնցումներով	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան

	○ Հետվիրահատական գլխուղեղի այտուցի զարգացում 2. Վերլուծություն խմբերով՝ ○ Սկզբնական գնահատում (GCS, pupil response, CT արդյունքներ) ○ ԲԳՃ-ի վերահսկման պլան ○ Թերապևտիկ քայլերի փուլային իրականացում Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում) Նպատակ՝ ԳՈւՎ ունեցող պացիենտների ինտենսիվ կառավարման իրական օրինակների վրա Գործունեություն՝ • Համատեղ համայց • Գանգուղեղային վնասվածքով պացիենտների ներկայացում՝ կլինիկական վիճակի վերլուծությամբ • ԲԳՃ-ի գնահատում՝ եթե կիրառվում է՝ մոնիտորինգի ցուցիչների դիտարկում • Բուժման ընթացքի քննարկում՝ ներառյալ օսմոթերապիայի, մեխանիկական վենտիլյացիայի, վիրահատական միջամտության դերը • Մասնակցություն հնարավոր ախտորոշիչ (CT/MRI), բուժական և վիրահատական միջամտություններին՝ դասավանդողի վերահսկողությամբ: Գործնական աշխատանքը կատարվում է նաև ստիմուլյացիոն կենտրոնում, մանեկենների վրա, տարբեր իրավիճակներում:	
Շաբաթ 6		
Օր 1		
3 ժամ	Դասախոսություն Բազմաօրգանային անբավարարության համախտանիշ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ 1. Դեպքերի ներկայացում՝ ○ Սեպսիսով և բազմաօրգանային անբավարարության համախտանիշով պացիենտ ○ Հիվանդ ARDS-ով, շոկով և երիկամային անբավարարությամբ ○ Սուր պանկրեատիտ՝ համակարգային բարդություններով 2. Խմբային վերլուծություն՝ ○ Օրգանների խանգարման փուլերի գնահատում (SOFA) ○ Բուժման առաջնահերթությունների դասավորում ○ Աջակցող թերապիաների ընտրություն	

	Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում) Նպատակ՝ Իրական դեպքերի հիման վրա ԲՕԱՀ-ի զարգացման ու վերահսկման ընթացքի վերլուծություն Գործունեություն՝ • Համատեղ համայց և պացիենտների քննարկում • Օրգանային ֆունկցիաների գնահատում իրական տվյալների հիման վրա • բազմաօրգանային անբավարարության համախտանիշ ունեցող պացիենտների բուժման ընթացքի վերլուծություն՝ ◦ Վերակենդանացման միջոցառումներ ◦ Վենտիլյացիա, դեղորայքային աջակցություն, դիուրետիկ մոնիտորինգ • Մասնակցություն ախտորոշիչ (լաբորատոր, պատկերային) և բուժական միջամտություններին • Ըստ դեպքի՝ մասնակցություն CRRT, ինտուբացիա կամ այլ միջամտության	
Օր 2		
3 ժամ	Դասախոսություն Սեպսիս, ախտորոշումը, ինտենսիվ թերապիայի սկզբունքները	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանշվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ Դեպքերի ընտրություն՝ ◦ Սուր սեպսիս հեմոդինամիկ անկայունությամբ ◦ Սեպսիսի շուրջ՝ բակտերիեմիայով ◦ Հիվանդ ԲՕԱՀ-ով՝ սեպսիսի ֆոնին Խմբային վերլուծություն՝ ◦ qSOFA / SOFA գնահատում ◦ Հեղուկային և դեղորայքային աջակցման պլան ◦ Ինֆեկցիայի աղբյուրի հայտնաբերում և վերահսկում Աշխատանք կլինիկայում և ստիմուլյացիոն կենտրոնում Նպատակ՝ Սեպսիս ունեցող պացիենտների բուժման իրական ընթացքի վերլուծություն և մասնակցություն Գործունեություն՝ • Համատեղ համայց • Սեպսիսի ախտորոշմամբ պացիենտների ներկայացում • Վիճակի գնահատում (SOFA, լաբորատոր տվյալներ, հեմոդինամիկա) • Բուժման փուլային մոտեցման քննարկում (հեղուկներ, հակաբիոտիկներ, վազոպրեսորներ)	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան

	Մասնակցություն ախտորոշիչ, բուժական և, ըստ անհրաժեշտության, վիրահատական միջամտություններին	
Օր 3		
3 ժամ	Դասախոսություն Արյան գազերի հետազոտության արդյունքների մեկնաբանությունը	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ 1. Դեպքեր՝ - Մետաբոլիկ ացիդոզ՝ լակտատացիդոզով - Շնչառական ացիդոզ՝ ԹՔՕՀ-ն ֆոնին - Մետաբոլիկ ալկալոզ՝ երկարատև փսխումից հետո - Շնչառական ալկալոզ՝ հիպերվենտիլացիայով պայմանավորված 2. Խմբային աշխատանք՝ - ABG վերլուծություն՝ pH, CO₂, HCO₃⁻ - Խանգարման բնույթի և պատճառի սահմանում - Բուժման պլանի ձևակերպում	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
Օր 4		
3 ժամ	Դասախոսություն Մեծահասակների շնչական դիսթրես համախտանիշ	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանչվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ 1. Դեպքերի օրինակներ՝ ՄՇԴՀ՝ սեպսիսի ֆոնին	Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան

	○ Վենտիլյացիոն աջակցությամբ հիվանդ՝ ծանր հիպոքսիայով ○ Պացիենտ՝ prone position-ում, թթվածնի բարձր կարիքով 2. Խմբային վերլուծություն՝ ○ $\text{PaO}_2/\text{FiO}_2$ վերլուծություն, գնահատում ○ Վենտիլյացիոն ռեժիմի ընտրություն և փոփոխության առաջարկ ○ Բուժման համալիր պլան Աշխատանք կլինիկայում և ստիմուլյացիոն կենտրոնում Նպատակ՝ ՄՇԴՀ ունեցող պացիենտների ինտենսիվ խնամքի իրական պայմաններում գնահատում և վերլուծություն Գործունեություն՝ • Համատեղ համայց • Պացիենտների ներկայացում՝ շնչառական վիճակի, արյան գազային տվյալների հիման վրա • Քննարկում՝ ○ Թթվածնաբուժության և մեխանիկական վենտիլյացիայի ընթացք ○ PEEP-ի, prone position-ի և այլ մեթոդների արդյունքներ • Մասնակցություն ախտորոշիչ, բուժական և անհրաժեշտության դեպքում՝ ինտերվենցիոն միջամտություններին	
Օր 5		
3 ժամ	Դասախոսություն Գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումներ, ինտենսիվ թերապիան	Սարգիս Ղազարյան/ Գրիգոր Մանուչարյան/ Հովհաննես Սարգսյան/ Արշավիր Թորոսյան/ Կարեն Տոնոյան/ Հայկ Հովհաննիսյան
3 ժամ	Գործնական աշխատանք Վերնագիր՝ Թեմային առանջվող կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում Կառուցվածք՝ 1. Դեպքերի օրինակներ՝ ○ Թարմ իշեմիկ ինսուլտ՝ թրոմբոլիզիսի հնարավորությամբ ○ Հեմոռագիկ ինսուլտ՝ բարձր ճնշմամբ և նյարդաբանական ախտանիշներով ○ Սուբարախնոիդալ արյունազեղում՝ գիտակցության ընկճմամբ և գլխուղեղի այտուցով 2. Վերլուծություն՝ ○ NIHSS գնահատում ○ ստացված արդյունքների մեկնաբանություն ○ Բուժման մարտավարության ձևակերպում Աշխատանք կլինիկայում (բաժանմունքում)	

	Նպատակ՝ ԳԱՇԽ ունեցող պացիենտների ինտենսիվ խնամքի գնահատում և մասնակցություն բուժմանը Գործունեություն՝ • Համատեղ համայնք՝ բաժանմունքի անձնակազմի հետ • Պացիենտների ներկայացում՝ կլինիկական տվյալների, և լաբորատոր արդյունքների հիման վրա • Քննարկում՝ ◦ Ցուցումներն ինտենսիվ բուժման, թթվաճնաբուժության, հեղուկային և հակակոագուլյացիոն թերապիայի ◦ Չհետաձգվող միջամտությունների անհրաժեշտություն • Մասնակցություն՝ ◦ Ախտորոշիչ և բուժական պրոցեդուրաներին (օր.՝ CPCT, ICP մոնիտորինգ) ◦ Ըստ անհրաժեշտության՝ վիրահատական միջամտությունների դիտարկում	
--	---	--

: